## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 13.02.2026թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-26/1 գնման պայմանագրի

ք. Երևան «04» 03 2026թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Անտոնյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայկական Ծրագրեր» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով Կատարողի առաջարկությունը և **հաշվապահական համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների («ՀԾ-Հաշվապահ 7» 4 (չորս) աշխատատեղի համար համակարգի սպասարկում)** մատուցման համար Կողմերի միջև 13.02.2026թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-26/1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 4.1 կետում «268 000 (երկու հարյուր վաթսունութ հազար)» թվերը և բառերը փոխարինել «258 000 (երկու հարյուր հիսունութ հազար)» թվերով և բառերով:

1.1.2 Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում նշված «268 000» թիվը փոխարինել «258 000» թվով:

1.1.3 Պայմանագրի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և Համաձայնագրի հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011724
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող

______________ Կ. Անտոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

Հայկական Ծրագրեր ՍՊԸ
ք.Երևան, Չարենցի 1
Արմսվիսբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500010002240100
ՀՎՀՀ 00807555

Տնօրեն՝

______________ Ա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված
13.02.2026թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-26/1 գնման պայմանագրի
04. 03. 2026թ. կնքված N 1 համաձայնագրի
«Հավելված N 2
13.02.2026թ. կնքված
ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-26/1 գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 72211174/1 | Հաշվապահական համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ («ՀԾ-Հաշվապահ 7» 4 (չորս) աշխատատեղի համար համակարգի սպասարկում) | | 67 000 | 67 000 | 134 000 | 134 000 | 134 000 | 201 000 | 201 000 | 201 000 | 258 000 | 258 000 | 258 000 | **258 000** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: »:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011724
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

Կ. Անտոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

Հայկական Ծրագրեր ՍՊԸ
ք.Երևան, Չարենցի 1
Արմսվիսբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500010002240100
ՀՎՀՀ 00807555

Տնօրեն՝

Ա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.